



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 54

ք. Մարալիկ

26 ապրիլի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՋԻՎԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Թումանյան փողոցի N 22 հասցեի տան բնակչի կողմից լիազորված անձ՝ Քրիստինա Ջիվանի Հովհաննիսյանի 26.04.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջիվան Մելիքի Գրիգորյանի կողմից ք. Մարալիկ նախկին Թումանյան փողոցի N 22 (այժմ Թումանյան փողոց 91/1) հասցեի հողամասում 1984 թվականին կառուցվել է բնակելի տուն, 1988 թվականին հացատուն և անասնագոմ, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.0300 հա հողամաս, ուստի ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Ջիվան Մելիքի Գրիգորյանի կողմից ք. Մարալիկ նախկին Թումանյան փողոցի N 22 (այժմ Թումանյան փողոց 91/1) հասցեում գտնվող հողամասում 1984 թվականին կառուցված բնակելի տան, 1988 թվականին կառուցված հացատան և անասնագոմի, ինչպես նաև օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.0300 հա հողամասի նկատմամբ գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ